




ՀԱՅՐ ԴԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի լրացավ հայ մշակույթի անխոնջ երախտավորներից մեկի՝ հայր Դևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակը։ Սույն առիթով ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Մայր Աթոռում նշվում է այս հիշարժան տարեթիվը։

Ս. ՊԱՏԱՐԱԳ, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՋ
ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

Դեկտեմբերի 27-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում պատարագում է արժ. տ. Հովհաննես քին. Մարությանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ հայր Դևոնդ Ալիշանի կյանքի ու մատենագրական-կրթական գործունեության մասին։ Վեհափառ Հայրապետը Իր քարոզում վեր է հանում 19-րդ դարի Մխիթարյան այս մեծ հոգևորականի կատարած դերն ու նշանակությունը մեր ազգային արժեքների պահպանման ու պանծացման և օտարներից այն ծանոթացնելու շնորհակալ գործում։

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ Մայր տաճարի Ավագ սեղանի առաջ կատարվում է հոգեհանգստյան արարողություն՝ հայր Դևոնդ Ալիշանի հիշատակին։

Հոգեհանգստյան սկզբում հանրաժանությամբ երգեհոնահար Պերճ Ժամկոչյանը խորը ապրումով նվագում է Կոմիտաս վարդապետի «Տեր, ողորմեա»-ն։

Ս. պատարագին և հոգեհանգստյան արարողությանը ներկա են լինում պաշտոնական անձինք, մտավորականներ, բազմաթիվ ուխտավորներ ինչպես արտասահմանից, այնպես էլ Հայաստանի զանազան վայրերից։

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ
ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 28-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի է ունենում հանդիսություն՝ նվիրված հայր Դևոնդ Ալիշանի կյանքին ու գործունեությանը։

Հանդիսությանը ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, Մայր Աթոռի ողջ պաշտոնեությունը, մտավորականներ, արվեստագետներ և բազմաթիվ այլ հրավիրյալներ։

Սույն հանդիսությանը ներկա են լինում նաև Հայկական ՍՍՀ Միևիտորների սովետին առընթեր հալ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գաուպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը։

Հանդիսությունը բացվում է «Որք զարդարեցին» շարականով, որը երգում է հոգևոր ճեմարանի երգչախումբը։

Բացման խոսքով հանդես է գալիս Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աթրահամյանը և իր հակիրճ ներածականով բնորոշում հայր Ղևոնդ Ալիշանի անձը և գործունեությունը:

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Օրվա հանդեսի գլխավոր բանախոսն է հոգևոր ճեմարանի դասախոս Ս. Անթույանը, որն ասում է.

«Հայր Ղևոնդ Ալիշանն, անկասկած, հայ ստեղծագործ ոգու մեծագույն արտահայտություններից մեկն է: Սովորական իմաստով կենսագրություն չունի նա: Դեռևս 12 տարեկան պատանի Պոլսից ուղևորվում է Վենետիկ՝ Մխիթարյան մայրավանքում ուսանելու, հետագայում ձեռնադրվում է վարդապետ և 1841 թ. սկսած ամբողջ 60 տարի գիրք է կարդում ու գրում: Հ. Ղ. Ալիշանը վախճանվել է 1901 թ. Վենետիկում, ուր և ամփոփված է նրա մարմինը: Հ. Ղ. Ալիշանը դեռ կենդանիվում տարրալուծվեց հայության մեջ՝ գրողից մինչև բանասերը, գիտնականից մինչև դպրոցական աշակերտը՝ արդարորեն վաստակելով «19-րդ դարի ամենամեծ գրագետը» կոչումը: Ինչպես իր ժամանակակիցներին, այնպես էլ այսօր մեզ զարմանք են պատճառում Ռ. Ղ. Ալիշանի բացառիկ աշխատասիրությունն ու արտադրողականությունը: 60 տարի շարունակ, նա, ըստ երևույթին, մի քանի հազար կտոր գիրք է կարդացել, Դ. Վարուժանի պատկերավոր արտահայտությամբ՝ «քամել է համայն երակը տիեզերքին», սակայն և հայագիտությունն ու հայ գրական անդաստանը հարբստացրել է շուրջ չորս տասնյակ հատորներով (տպագրվածները միայն), որոնք հոգևոր սնունդ մատակարարեցին հայությանը: Հ. Ղ. Ալիշանը նախ՝ մասնագետների գնահատությամբ շնորհալի բանաստեղծ է, նորարար բանաստեղծ, ապա և խորհամուտ պատմագետ, աշխարհագրագետ, թարգմանիչ ու մանկավարժ: Առավել զարմանալին այն է, որ նա մեծ է իր ստեղծագործական պարագծի բոլոր կետերում և եվրոպացի գիտնականի արդար գնահատությամբ «19-րդ դարի մեծ գիտնականներից մեկը» (Էդ. Զախաու):

Հ. Ղ. Ալիշանը նախ և առաջ բանաստեղծ է. որպես պատմաբան, աշխարհագրագետ և հայրենագետ ևս նա մնում է բանաստեղծ, այս իմաստով շատ ճիշտ է բնութագրել նրան Դ. Վարուժանը՝ ասելով. «Ալիշան բանաստեղծ էր, որ գիտություն կրներ: Այս կնշանակել, թե գիտությունը կծողովորդակալացներ: Իր թանգառանի, իր մագառաթներու մատենադարանին և առհասարակ հայ-

րենի բոլոր ավերակներուն մեկնությանը վերել կախված էր իր հսկայական տալիզը, և ահա Խորենացիին խոսքը երգի կփոխվեր. Եղիշեի աղաղակը՝ դյուցազներգության, Եզնիկի մտածումը՝ երևակայության, Շնորհալիի աղոթքը՝ օրհներգության, ավերակներու տրտմությունը արցունքի, և անցյալի նշույլը՝ հրդեհի»: Նկատի առնելու հանգամանք է, անշուշտ, այն, որ Ռ. Ղ. Ալիշանը բանաստեղծել է 1840—1852 թթ. և բանաստեղծելու երջանիկ տարիքի սահմանագիծն անցնելուց հետո միայն անցում է կատարել դեպի հայրենագիտությունը: Եվ ընդհանրապես Ալիշանն առավելապես որպես բանաստեղծ է հայտնի: Նրա չափածո գրական ստեղծագործությունները գրեթե ամբողջությամբ ամփոփված են «Նուագք» խորագրով լույս տեսած 5 հատորների մեջ, որոնք տպագրվել են Վենետիկում 1857—58 թթ.: Բոլոր 5 հատորների հիմնական բովանդակությունը ազնվի, բարու, գեղեցկի, բարոյականի ու վեհի, հայրենասիրության, սխրանքի գովերգումն է: Դժբախտաբար գրաբար գրված լինելով 5 հատորները չմարսվեցին: Սակայն այս շարքում բացառիկ է երրորդ՝ «Հայրունի» վերտառությամբ հատորը, ուր գրաբար գրված պատմա-հայրենասիրական բովանդակությամբ ստեղծագործությունների հետ մեկտեղ գտնում ենք աշխարհաբարով գրված 11 բանաստեղծություններ («Հայոց աշխարհիկ», «Պապուն Ավարայրի», «Ողբամ գրեզ, Հայոց աշխարհի», «Հրագրան», «Մասիսու սարերն», «Ծուշանն Ծավարշան», «Աշոտ Երկաթի ծովուն Սևան», «Լուսնկայն գերեզմանաց հայոց», «Հայ հայրենիք», «Հայ հանճար», «Վերջին երգ վիրավոր բամբուհարին»), որոնց հեղինակ Ալիշանը հայտնի է Նահապետ գրական անունով: Ահա աշխարհաբարով գրված այս 11 գոտորիկ բանաստեղծություններով է առավելապես հայտնի բանաստեղծ Ալիշանը: Սրանք ժամանակին կես դար շարունակ զարդարել են հայերեն դասագրքերը, ամբողջությամբ կամ մասամբ արտատպվել ու երգվել՝ սերունդներ դաստիարակելով հայրենասիրության, Խիախության, հայրենամիությունից ոգով: Մ. Նալբանդյանն առաջինն է, որ խորությամբ գնահատեց Ալիշան-Նահապետին, իր հայտնի «Սոս և Վարդիթերի» կրիտիկայում՝ գրելով. «Չենք մոռացած «Նահապետ» ստորագրությամբ Հ. Ղևոնդ Ալիշանինգ արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթվածքը՝ «Պապուն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» և մյուս բոլոր աշխարհաբար ոտանավորքը... չափաբերական քերթվածոց մեջ արժանավոր վարդապետը ախտյան չունի: Եթե մենք լռենք, Ավարայրի Բլբուր կխուսի...»: Առ սոփթով Մ.

Նալբանդյանը գրում է. «Հայր Ղևոնդ Ալի-
շանյանը ունի բանաստեղծական քան-
քար»: Խստապահանջ քննադատի տված
այս արդար գնահատականն այսօր էլ ուղե-
ցույց է մեզ համար. սա կարող էր նաև հի-
շեցում լինել բոլոր նրանց համար, որոնք
ինչ-ինչ նախապաշարումներով և կանխա-
կալ կարծիքներով աշխատել են սովորել
Ալիշանին որպես բանաստեղծ, նամանա-
վանդ որպես նորարար բանաստեղծ: Չը-
պետք է մոռանալ, որ հայ նոր գրականու-
թյան պատվանդանը հանդիսացող իր
թվարկված բոլոր գործերի մեջ Մ. Նալ-
բանդյանն անվերապահորեն միայն Ալիշա-
նի՛ն է գնահատում որպես արվեստագետ:
Արդ, ի՞նչ ակունքից սնվեց Ալիշան բանաս-
տեղծը: Ալիշան բանաստեղծին սնող ակուն-
քը անցյալի հայ մատենագրությունն էր, նա-
մանավանդ Գրիգոր Նարեկացին ու Ներսես
Շնորհալին, որին նվիրված մի խորհրդատ
ուսումնասիրություն է գրել Ալիշանը («Շնոր-
հալի և պարագա յուր», 1875 թ.): Ալիշանը
մեծապես սիրել և գնահատել է նաև հայ
միջնադարյան տաղերգությունը: Այս առու-
մով բոլորովին պատահական չէ, որ վերևի
բանաստեղծություններից նա նախապես
«Բազմավեպում» տպագրել է որպես միջ-
նադարյան գուսանական երգեր՝ իբրև թե
քաղված գրչագիր մատյաններից: Նույնպես
և այն, որ 1852 թվականին հավաքել, կազ-
մել և հրատարակել է 19 հայկական ժողո-
վրդական երգեր, «Հայոց երգք ուսմկա-
կանը» խորագրով, որոնց թվում և հոշակա-
վոր «Կոունկը»: Սակայն ուշադրության ա-
ռավել արժանի են նրա՝ հայ ժողովրդական
ստեղծագործությանը տված գնահատական-
ները: 1845 թվականին ուսմկական երգերին
նվիրված հոդվածում գրում է. «Ռամկական
երգը ազգային ոգուն մեկ ձայնն է... այսպի-
սի երգերը շատ անգամ ավելի լավ կիմաց-
նեն ազգի հանճարը, քան թե ծանր գրվածք-
ները. և կգտնվին անոնց մեջ անանկ սքան-
չելի գրուցվածք, որ միայն իրենց ուսմկա-
կան անունին համար հասարակ բան կկարծ-
վին, բայց ճշմարտությամբ գերագույն գըր-
վածոց կարգը անցնելու են»: Ապա ի մաս-
նավորի խոսելով «Ողբ կաքավու» ժողովրդ-
դական ստեղծագործության մասին, ավել-
լացնում է. «Կարծեմ, ավելի վսեմ -հայկա-
կան լեզվով ալ գրված ըլլար նե, նույն աղ-
վորությունը չէր ունենար»: Ահա ինչու ու-
սումնասեր ու ազգասեր հայորդիներին կոչ
է անում հավաքել Հայաստանի գավառնե-
րում երգվող ժողովրդական երգերը, «վա-
սընգի անոնցմե կրնան շատ մարգարիտներ
եղլել, և թերևս ստեղծել հայոց գրականու-
թյան տաճարին մեջը պատվավոր տեղ մը
ունենալ»:

Իրավացի է գրականագետ Ա. Տերտեր-
յանը, երբ գրում է. «Ալիշանն օգտագործե-
լով միջնադարյան հայ բանաստեղծությու-
նը, առանձնապես Նարեկացուն և Շնորհա-
լուն, հայ քնարի հնչյունական սիմվոլիկան
կատարելագործել է, զգալ տալով իր գործե-
րի մեջ հայ լեզվի շառաչումը»: Բանաստեղ-
ծի ոգևորության աղբյուրը, անշուշտ, հայոց
պատմությունն էր. մեր նախնիների մեծա-
գործությունները, որոնք հանուն իրենց ազ-
գային գոյատևման, հանուն համոզմունքնե-
րի և սրբագործված ավանդությունների
պահպանման ի հարկին իջնում էին ռազմի
դաշտ և պատերազմում անարգ թշնամու
դեմ՝ գերադասելով ազատ մեռնել, քան
ստրուկ ապրել: «Մահ ոչ իմացեալ մահ է,
մահ իմացեալ անմահութիւն է»,—պատգա-
մել է Եղիշեն: Այդ նույն կենսափոխա-
րությամբ է հագեցած Նահապետի «Պլպույն
Ավարայրի» բանաստեղծությունը, որը փաս-
տորեն երկրորդված մի դյուցազներգություն
է Եղիշեի հայտնի դյուցազնավեպից հետո:

«Թե բյուր դարք անցնին՝ դու մընաս
Վարդա՛ն»,

«...Հայաստան հիշե գյուր Կարմիր
Վարդան»:

Իսկ ո՞րն էր հեղինակի հետապնդած նը-
պատակը: Հիշենք անցյալ դարի 40-ական
թթ., երբ օվկիանի պես ալեկոծվում էր ամ-
բողջ Եվրոպան. ազգային արժանապատու-
թյամբ ապրելու պահանջը համոզմունք ու
անհրաժեշտություն էր դարձել եվրոպական
տիրված ազգերի համար, մասնավորապես
ավստրիական բռնապետության դեմ պայ-
քարող իտալացի հայրենասերների մեջ, ո-
րոնց զենքի շաչյունն ու հաղթական քայեր-
գը լսում էր, անշուշտ, բանաստեղծը: Իսկ
հայե՞րը.

«Կարկառ հանգստյան տոհմի տան
Հայկա,

Համարի 'նդ մեռյալս և ինքն ի քուն
կա»:

Բանաստեղծի հոգում լեռնանում է այն
հույզը, թե պատմական անցյալում մեծ
փառքի հասած իր հարազատ ժողովրդի
իրօրյա ժառանգները խոր քնի մեջ են, ի-
րենց պարտադրված ճակատագրին ընտե-
լացած, համակերպված: Սակայն չի հուսա-
հատվում բանաստեղծը, պետք է շեփոր հըն-
չեցնել, արթնացնել հային՝ ազգային արժա-
նապատություն ներարկել նրան, ինքնիշ-
խան լինելու գերագույն հաճույքը զգալ տալ
նրան, և այն ժամանակ կարթոնի Հայը հայի
մեջ... Բայց այս բոլորը ի գին գոհողության,
անձնուրացության, հերոսության ու մարտի-

րոտության միայն կարելի կլինի ձեռք բերել, ահա ինչու Նահապետը գովերգում է հերոսությունը, նրա ականջին որպես անուշ մեղեդի է հնչում հայ խիզախների գեներալ շաշունը: Սակայն չմոռանանք, ինչպես Ալիշանն է գեղեցիկ ձևակերպել՝ «Մեր ազգային գեներալ պաշտպանական է և ոչ թշնամական»: Բանաստեղծը հուսահատ չէ.

«Հայաստան անկեր՝

Բայց ո՛չ է անցեր»:

Ահա ինչու կոչ է անում.

«Ե՛լ, կանգնե՛ր դու քեզ, զավակ ես երկրի.

Լո՛ւս ծագե մըթեղ, ե՛լ, կանգնի՛ր ի վեր.

Հերիք քնացեր.

Գիշերդ է անցեր...»:

Այս բոլորն առավել առարկայական, շոշափելի ու ցայտուն են դառնում այդ շարքում պանդուխտ հային, հայ հանճարին, հայ հայրենիքին նվիրված գողտրիկ բանաստեղծությունների ընդերգումս: Եվ այս բոլորը նրա համար, որ մենք գոյատևենք որպես ազգ. «Շանաչել և պահել անվթար գետիական շնորհս ազգիս, զլեզու նորա, զպատմություն նորա, զսովորություն նորա, անվնաս, զհարազատ դպրություն նորա և զփառս անվան նորա: Հայսպիսի կամիմ հայրենասիրություն»:

Այս շարքի բանաստեղծությունների հիմնական առանձնահատկությունը լավատեսությունն է հայոց ապագայի նկատմամբ, որ բացառիկ ոռոմանտիզմով արտահայտված է «Մասիսու սարերն» բանաստեղծության մեջ:

Ինչ մեծ ազգագագացողություն պետք է ունենա մարդ, որ հայրենիքից հեռու, կղզում «պարփակված», Արարատը համարի հայոց վերածննդի պատվանդանը.

«Դալա՛ր մանկտիք, ձեր տակն է Արարատ,

Պի՛նդ կացեք...»:

Եվ այս բոլորը՝ արվեստով: Մենք վերևում արդեն խոսեցինք Մ. Նալբանդյանի գնահատականի մասին: Նահապետի արվեստի մասին Ա. Տերտերյանը գրում է. «Ալիշանը բանաստեղծական արվեստի վարպետ է և գտնվում է իր ժամանակի տեխնիկական նրվածումների ոչ թե ստորոտում, այլ բարձունքին»: Իսկ Վ. Բրյուսովը իր խմբագրած «Поэзия Армении» ժողովածուի առաջաբանում գրել է. «Ալիշանը չափածոյի տեխնիկայում հասել էր բարձր կատարելության», իսկ Մ. Արեղյանը հաստատում է. «Կարևոր է եղել Ալիշանի դերը նաև հայ պոեզիայի մեջ տաղաչափական ձևերի զար-

գացման մարզում»: Ալիշան-բանաստեղծի մասին խոսելիս չպետք է զանց առնել նաև նրա գրաքարով գրած ստեղծագործությունները, որոնց մեջ գոհարներ կան: Բավական է ասել, որ հայտնի «Բա՛մ, փորոտան»-ը նրա գրաքար ստեղծագործություններից է՝ Վահան Մամիկոնյանի մարտական քայերգը:

Մասնագիտական լուրջ գործ է, անշուշտ, մեկ սու մեկ ցույց տալ, թե ո՛ր հայ գրողների հին գործեր Ալիշանի անմիջական ազդեցությամբ կամ ստեղծագործական անուղղակի ազդեցությամբ են գրված: Սակայն մի բան պարզ է, Ալիշանը հիմնականում ոչ միայն ուրվագծեց այն մայրուղիները, որոնցով պետք է ընթանար մեր գրականությունը, այլև իր ստեղծագործությամբ տվեց փայլուն նմուշ-օրինակներ: Փաստորեն նա կամրջեց 19-րդ դարը Գ. Նարեկացու, Ն. Շնորհալու և առհասարակ մեր ամբողջ հին մատենագրության լավագույնի հետ: Առավելապես այդ ուկե կամուրջով, անշուշտ, Պեշկոթաշյանը, Արփիարյանը, Պատկանյանը, Հ. Հովհաննիսյանը, Նույնիսկ Դ. Վարուժանը հաղորդակցվեցին նախնյաց հետ: Ավելին, նրա ստեղծագործությունները գաղափարի վերածած մեծապես օգնեցին հայ հասարակական-քաղաքական մտքի զարթոնքին: Այստեղ տեղին է մեջ բերել Ա. Չոպանյանի հետեվյալ ասույթը Ալիշանի մասին. «Ալիշանի գործը... անուղղակի կերպով, բայց շատ հզորապես նպաստած է հայ ազատագրական պայքարի շարժման ծննդյանն ու անմանը արդի հայ մտքին մեջ, որովհետև ժողովուրդ մը, երբ գիտակցությունը կունենա անցյալին մեջ մեծ ու ազատ եղած ըլլալուն, չի կրնար երկարորեն հանդուրժել ստրկական անարգ կացության մը մեջ կապկպված մնալու և կշտապե ամեն գոհողություն թափել՝ այդ գեղեցիկ անցյալը դրականապես վերանորոգելու համար: Ալիշանի գործը պոփեցնող, ազնվացնող, ներշնչող մեծ ձայնն է եղած, որ պատրաստած և դյուրացուցած է Րաֆֆիի գործը»: Իսկ այս բոլորը ցույց է տալիս, որ Նահապետը իր գործի արդյունքով դատելով՝ վեր, շատ վեր էր կղզեքնակի իր հանգամանքից ու կոչումից... Սա մեր նախնյաց պատգամախոսն է և հայ զարթոնքի շեփորահարը: Նա համահայկական հայ է,—այս է ըստ մեզ Ալիշանի ճիշտ անվանումը:

Հաջող է նաև Ալիշանի գեղարվեստական արձակը. այստեղ, անշուշտ, առաջինը պետք է հիշել «Հուշիկը հայրենյաց հայոց» հիմնականում ժամանակի աշխարհաբարով գրված երկհատորյակը, որտեղ հայոց պատմության տարբեր դրվագների, դեպքերի ու դեմքերի վերակենդանացումով աշխատել է,

ինչպես ինքն է առում. «Հայրենաց արքայական զգացման մեծ վատարանն մեկ երկու կայծեր թափել» հայազգիների հոգու մեջ:

Հ. Դ. Ալիշանը կատարել է մեծ բազմաթիվ թարգմանություններ, մասնավորապես Բայրոնից, Օհլերից, Միլտոնից, Լոնկֆելդից: Հատկանշական է, որ թարգմանությունների մեջ մեծ բաժին են կազմում մեծ վերոհիշյալ և այլ հեղինակությունների ազատատենչ ոգով գրված ստեղծագործությունները, որոնք, անշուշտ, մեկ անգամ ևս վկայում են, թե դրանք որքան համահնչյուն են հեղինակի բուն ստեղծագործական առաքելության հետ:

Հ. Դ. Ալիշանը մեծ մանկավարժ է. իր ուսումնասիրությունից հետո, դեռևս 21 տարեկան երիտասարդ հասակում, 1841 թ. որպես ուսուցիչ պաշտոնավարել է Վենետիկի Ռաֆայելյան դպրոցում, միայն երկու տարի հետո դառնալով դպրոցի ուսումնապետը, իսկ 1848-ին՝ տեղափոխվելով պաշտոնավարելով մինչև 1850 թ.: Ոչ միայն սերը մանկավարժության հանդեպ, այլև պարտականության կատարման պատասխանատվության զգացումը 1858 թ. նրան բերում է Փարիզ, Մուրատյան վարժարան, որի տեղափոխում է դառնում 1859—1861 տարեշրջաններին: Այնուհետև վեդ.ադարձ Վենետիկ, վերստին տեղափոխվելով պաշտոնի ստանձնում Ռաֆայելյան դպրոցում մինչև 1872 թ., երբ թողափելով իր ուսից բոլոր պաշտոնները, վերջապես ժամանակ է գտնում հիմնավորապես զբաղվելու հայրենագիտությամբ:

Ուսումնասիրության հատուկ նյութ է, անշուշտ, Ալիշան-մանկավարժը: Անկասկած մանկավարժական աշխատանքն այն առարկեզն էր, որ իր ոգուն համապատասխան մա կարող էր կրթել մատաղ հոգիներ: Բավական է աչքի առաջ բերել նրան աշակերտած հայ մեծությունները՝ Թովմաս Թերզյան, Նորայր Բյուզանդացի, Արփիար Արփիարյան և ուրիշներ, հասկանալի կդառնա Ալիշան-մանկավարժի վաստակը: «Միշտ լիալիր որդիական սիրով կը հիշեմ մեր մախկին վերատեսուչն, գերապատիվ Հայր Ալիշան, որ մեր մեջ այնքան խորագույն կերպով սկզբնավորեց հայկական գրականությունը, շենշող սերն անոր հանդեպ, և որ զայն սքանչելապես պսակեց»,—վկայում է Ա. Արփիարյանը:

Ալիշան-մանկավարժի մասին ամբողջական պատկերացում կարելի է կազմել մեծ Գ. Արծրունու հետևյալ խոստովանությունից. «Դպրոցի (Ռաֆայելյան—Ս. Ա.) ամբողջ կազմակերպության և ուղղության վրա տիրում էր հայր տեսչի՝ Ալիշանի ոգին, դպրոցն ուսումնասիրած լինելով՝ կարելի էր

գաղափար կազմել նրա ղեկավարի ուղղության, բնավորության ու լայն համամարդկային գաղափարների մասին: Ալիշանի անխարդախ, համակրելի ու անկեղծ բնավորությունը, նրա լայն, մարդասիրական և հայրենասիրական անձնվեր հանճարը կերպարանավորվում էր դպրոցի թե՛ ամբողջության և թե՛ նրա յուրաքանչյուր մանրամասնության մեջ»:

Հ. Դ. Ալիշանը մեծ գիտնական է:

Ալիշան-գիտնականն է, որ համաեվրոպական և համաշխարհային ճանաչում գտավ, դարձավ ոչ միայն աշխարհի հեղինակավոր գիտական հաստատությունների ու ընկերությունների, այլև ակադեմիաների պատվավոր անդամը, այդ թվում և Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերության ու Եմալի փիլիսոփայական ակադեմիայի անդամը: Իսահակյանը մի գեղեցիկ ատյաթ ունի՝ «Ես գալիս եմ հավերժից, բայց հայության միջով»: Ալիշանի օրինակով կարելի է ցույց տալ, որ գիտնականի ճանաչումը չափվում է նրա հետազոտությունների արդյունքով, թեկուզ և նրա զբաղմունքի բովանդակությունը զուտ ազգային մշակույթ լինի: Քաջ տիրապետելով հին ու նոր միջաբանների, Ալիշանը գերմարդկային աշխատանքով կարողացավ հմտորեն յուրացնել համամարդկային գիտությունն ու մշակույթը: Սրա լավագույն ապացույցն է ամբողջ երկրագնդի բոլոր պետությունների նկարագրությունը տալու խիզախ մտածումը, որ ծրագրել էր մա, և որ 1853 թ. որպես սկիզբ լույս ընծայեց «Քաղաքական աշխարհագրությունն նկարագրող պատկերօք» խորագրով: Սակայն բարեբախտաբար առողջ բնագոյն ու հայրենագազացողությունը նրա տաղանդը ճիշտ ուղի վրա դրեցին, և 1855 թ. սկսած մեկը մյուսի ետևից լույս տեսան նրա հայրենագիտական երկասիրությունները՝ «Տեղագիր Հայոց Մեծաց» (Վենետիկ, 1855), որը և ֆրանսերենի է թարգմանել ու տպագրել Դյուլյորինեն, «Նշմարք և նշխարք Հայաստանի» (1870)՝ թարգմանված ֆրանսերենի, անգլերենի, գերմաներենի, «Հայ-Վենետ» (1896)՝ համառոտ թարգմանված իտալերենի, այլև «Հայ-Բուսակ» (1895) և այլն, և այլն: Այս շարքում, սակայն, առավելապես կարևոր են «Ծիրակ» (1881), «Սիստան» (1885, որ և թարգմանված է ֆրանսերեն), «Այրարատ» (1890) և «Սիսական» (1893) պատմա-աշխարհագրական, տեղեկագրական ու հնագիտական երկասիրությունները, որոնք աննախադեպ լինելով, թվում է, իրենց տեսակի մեջ դեռևս անգերազանցելի են, մեր օրերում էլ պիտանի և ուսանելի: Ընդհանուր գաղափար տալու հա-

մար ասեմք, որ և՛ Այրարատի ու Սյունիքի, և՛ Ծիրակի ու Կիլիկիայի վերաբերյալ մեր ամբողջ մատենագրության մեջ չկա ոչ մի տեղեկություն, որ չհաղորդի Ալիշանը, այլև ականատեսի ճշգրտությամբ նկարագրում է պատմական հուշարձանները, արձանագրությունները և այլն, և այլն, ամեն, ամեն ինչ: Առավել ապշեցուցիչն այն է, որ նա երբեք չի եղել իր նկարագրած վայրերում և ընդհանրապես Հայաստանում: Սակայն նա հարյուրավոր նամակներ է ուղարկել ժամանակի հայ գիտնականներին, հնագետներին, աշխարհագրագետներին՝ ուզենալով ճշտել վերջին մանրամասնություններն իսկ: Բառացի քամել է ամբողջ հայ գիրքը և հայերի ու Հայաստանի մասին գրված ամեն ինչ, իր խոստովանությամբ, մեծապես ուշադրություն դարձնելով հատկապես մեր մատյանների հիշատակարաններին. «Յայս գործ օժանդակեն ինձ ոչ միայն ճանապարհորդաց գրուածք և հին պատմիչք մեր, այլ և ի մասնատրի Յիշատակարանք ձեռագրաց, որոց ոչ սակաւ ծանօթութիւնս քաղեալ եմ և քաղեմ, և երբեմն միակ աղբերք լինին տեղեկութեանց, զոր ոչ առ պատմիչս գտանեմ և ոչ առ աշխարհագիրս»:

Մի խոսքով՝ իր տեսակի մեջ կատարյալ հայ հանրագիտարան: Սակայն ինքը երբեք կատարյալ գործ ստեղծած լինելու խաբկանք չի ունեցել: Իր նամակներից մեկում գրում է. «Արդարև բոլոր կարի գԱյրարատայ, թերևս ի վեր քան զկար իմ և պատշան, զի հետի գտանիմ և անտես վայրացն զոր ստորագրեմ. այլ ես ի գրոց բարբառեցալ և ի լրոց, այլք ի տեսոյ և ի փորձոյ հաստեացեն և լրացուցեն»:

Այս իմաստով Ալիշանը նաև հայրենագիտության հիմնադիրն ու ցարդ անգերազանցելի մնացած հայրենագետն է մեր իրականության մեջ, որի սկսած աշխատանքը, դժբախտաբար, իր արժանավոր հետևորդները չունեցալ, գոնե ըստ նմին պատմական Հայաստանի մնացած բոլոր նահանգներն էլ նկարագրելու իմաստով: Ծիշտ ու ճիշտ Ալիշանին պատշանում է ֆրանսիացի հայտնի պատմաբան Օգյուստեն Թիերրիի հետևյալ արտահայտությունը. «Աշխարհում կա մի քան, որ ավելի արժե, քան բոլոր նյութերն զվարճությունները, ավելի, քան հարստությունը և ստողությունն իսկ,— դա նվիրումն է գիտությանը»: Չմոռանանք նաև, որ Ալիշանը Վենետիկի Մխիթարյան միաբանության պաշտոնական ամսագիր «Բազմավեպ»-ին աշխատակցել է նրա հիմնադրման օրվանից (1843 թ.), իսկ 1849—51 թթ. եղել է նրա խմբագիրը: Այս իմաստով ուշադրության արժանի է, անշուշտ, Մխիթարյան հ.

Միմոն Երեսյանի տված հետևյալ տեղեկությունը. «Ալիշան «Բազմավեպ»-ի հոգին եղալ, անոր արթուն հսկողը, իսկական կյանքը... Կը պատվիրեր որ հոգվածները... ըլլան համառոտ, «Բազմավեպ»-ին անվան հավատարիմ՝ բազմատեսակ, ոչ երբեք չոր ու ցամաք, ժողովրդյան մտքին անհարմար, անմարսելի ու անմատչելի... Ինքը կջանար իր հոգվածները «Բազմավեպ»-են անկապա ընելու»:

Ամփոփենք. Ալիշանը նորարար-բանաստեղծ է, լավ արվեստագետ, խոշոր գիտնական, հայրենագիտության հիմնադիրն ու նրա մեծամասնական մշակը, այլև լավ մանկավարժ ու խմբագիր, մի մարդ, որ ինչ-որ չափով իրենով լցրեց 19-րդ դարի ամբողջ հայ կյանքը: «Ժամանակը աղեկ կթելու է, հավիտենականություն կելլա»,—գրել է նա իր նամակներից մեկում: Իրոք նա լավագույնս կյեց ժամանակը՝ իմաստավորելով իր կյանքի ամեն մի պահը և իր համար հավիտենականություն ապահովեց: Կանցնեն ժամանակներ, շատ գործեր կխամրեն, սակայն Ալիշանի թողած ժառանգությունից շատ քան չի կորցնի իր արժեքը: Եվ այս չէ՝ արդյոք մարդ արարածի իրական անմահությունը:

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՎ

Ապա հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանդիսությանը ելույթ է ունենում ազգիս Վեհափառ Հայրապետը.

«Երջանիկ զուգադիպությամբ մեր մայր երկրի՝ Հայաստանի հիսնամյա տոնակատարության շուրջ համախմբվեցին չորս եկեղեցական մեծ դեմքեր, իրենց հոբելյաններով: Չորսն էլ հոգևորական, չորսն էլ մեծավաստակ, չորսն էլ ճշմարտապես հայրենասեր: Առաջինը զոր տոնախմբեցինք մենք այս տարի, Առաքել վարդապետ Դավրիժեցին էր, պատմաբանը հայտնի, երկրորդը՝ Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսը հայոց, երրորդը՝ Մկրտիչ Ա. կաթողիկոս, Խրիմյան Հայրիկը և չորրորդը՝ հայր Ղևոնդ վարդապետ Ալիշանը:

Այսօր Մենք ոգեկոչում ենք հիշատակը հայր Ղևոնդ Ալիշանի:

Երեկ սուրբ պատարագի մատուցմամբ և հոգեհանգստյան կատարմամբ աղոթեցինք մեծ վարդապետի հոգվո հանգստյան և խաղաղության համար: Կաթողիկոսը քարոզ խոսեց, վեր առնելով նրա կյանքն ու գործը, իսկ այսօր այստեղ ուզում ենք կրկին երկու խոսք ասել բերելու համար ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռից Մեր օրհնությունը՝ հայր Ղևոնդ վարդապետի հիշատակին,

Մեր գլխավոր բանախոսը պարոն Սամվել Անթոնյան պայծառ և հուզիչ կերպով ներկայացրեց ամբողջական պատկերը մեծամուն մխիթարչյան վարդապետի անձնավորության և վաստակի, որ շատոնց ի վեր դարձած է համազգային գնահատանքի և մեծարանքի առարկա:

Իբրև փակման խոսք, Մենք կկամենանք մի բանի խոսքով ընդգծել մի հանգամանք միայն, այն է ոգեկոչել լուսաբնակ հայր Ալիշանի մարգարեաշունչ ոգին:

Արդարև, Ղևոնդ Ալիշան իր ժամանակի մշտնջենիքի, տեսել էր՝ հայոց լուսավոր ապագան և այդ տեսիլքով լուսավորել էր և ոգեշնչել մեր ժողովուրդի զավակներին կես դար շարունակ: Իբրև վկայություն այս իրողության, հիշենք մեկ դրվագ նրա կյանքից:

Պատմում են թե անցյալ դարու վերջերին, ցարական իշխանության արտաքին գործոց նախարարը, ծագումով գերմանացի, կայցելել է Վենետիկ՝ ս. Ղազար: Մխիթարյան հայրերը ըստ իրենց սովորության պատիվներով կընդունին մեծ հյուրին, ցույց տալով այն ամենը ինչ պահպանում են իրենք սրբությանը ու հայարտությանը: Ցարական նախարարը տեսնելուց հետո այդ ամենը և լսելուց հետո տրված բացատրությունները հայ մշակույթի հին և նոր արժեքների, հիշատակների մասին, կիսյունի իր խոր գնահատանքը և հիացումը, և վերջում կավելացնի՝ «Մակայն ցավում եմ հայտնելու Ձեզ իմ համոզումը թե դժբախտաբար Ձեր բոլոր ջանքերը, և ընդհանրապես հայ ժողովուրդի ճիգերը ապարդյուն են մնալու: Մի օր Արևմտյան Հայաստանում հայերը պիտի կոտորվեն օսմանցիների կողմից, մյուս շրջաններում պիտի ուժանան ու ձուլվեն այլ ազգությունների մեջ ու այսպես վերջ պիտի գտնեն ձեր ժողովուրդը»:

Մխիթարյան հայրերը, այս անսպասելի խոսքերից շփոթված և զարհուրած, պահ մը կմնան լուռ ու մտածկոտ: Նրանցից մին սակայն, հեզ ու բարի նայվածքով, կպատասխանե ցարի նախարարին՝

«Ձերդ Գերագանցություն, այնուամենայնիվ մենք հավատում ենք հայ ժողովուրդի ապագա վերածնունդին: Եվ մեր հույսը դրած ենք,—ասում է նա,—նախ Աստուծո վրա, երկրորդ՝ մեր աշխատանքի վրա, և երրորդ՝ ժամանակների և դեպքերի փոփոխականության վրա»:

Այդ պատասխանը տվողն է հայր Ղևոնդ Ալիշան:

Եվ իրոք մենք տեսնում ենք ահա այսօր և ապրում ենք, մեր ժողովուրդի և մեր մայր երկրի վերածնունդը: Գիտենք թե Աստված իրապես ողորմեց մեր ժողովուրդին, գիտենք

թե Նրա զավակների աշխատանքը, պայքարը իզուր չեղան և արդյունավետ դարձան ի վերջո, հազար ու մեկ դժվարություններ և արյունոտ ճանապարհներ անցնելուց հետո թե Արևմտահայաստանում և թե Արևելահայաստանում մեր ժողովուրդը կերտեց մշակութային ճշմարիտ վերածնունդ մը անցյալ դարի վերջերին և այս դարու սկիզբներին, ու նաև՝ հայ ազատագրական պայքարը, վերջ ի վերջո հաղթանակով պսակվեց, Մարդարապատի ճակատամարտով և նոր ճանապարհ բացվեց հայոց պատմության առաջ: 1920 թվականին հայկական նոր պետությունը կազմակերպվեց վերջնականապես ապահով հիմքերի վրա, նա աճեց ու զարգացավ և մենք, այս տարի հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակին, տոնեցինք մեր հայրենի պետության վերածննդյան հիսնամյակը:

Այսօր մեր վերածնված հայրենի երկրի բարձունքից, ս. Էջմիածնից, քաղաքամայր Երևանից Մենք ողջունում ենք և օրհնում մխիթարչյան մեծ վարդապետի հիշատակը, աղոթելով որ Աստված մեր ժողովուրդը և մեր երկիրը միշտ խաղաղ, ապահով և հառաջընթաց ճանապարհի վրա պահի-պահի և մեր ժողովուրդի զավակների նորանոր սխրանքներով, մտքի հանճարով և հուժկու բազուկներով մեր մայր հայրենիքը միշտ աճի, միշտ զարգանա և հասնի իր բոլոր ազնիվ երազանքների իրականացման: Ամեն»:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Այնուհետև սկսվում է հանդիսության գեղարվեստական մասը: Բ լսարանի ուսանող Արտաշես արկ. Մուշեղյանը արտասանում է հայր Ղևոնդ Ալիշանի «Մասիսու սարեր» բանաստեղծությունը, իսկ նույն լսարանի ուսանող Սեզար արկ. Գոնտրալյանը՝ «Կարմիր Վարդան»-ը:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու Նորեն Մելխանեջյանի ղեկավարությամբ, ապրումով և խանդավառությամբ կատարում է «Բա՛մ, փորոտան» (Մ. Կանաչյան), «Պալույն Ավարայրի» (Մ. Եկմաչյան), «Հայրենիքիս հետ» (խոսք՝ Հովհ. Թումանյանի, երաժշտությունը՝ Ալ. Հարությունյանի), հատված «Տանհոյգեր» օպերայից (Վազգեն) խմբերգերը: Դաշնամուրի վրա նվագակցում է հոգևոր ճեմարանի սոլֆեջիոյի դասատու Թադևոս Ասմարյանը:

Վերջում իր կատարողական բարձր արվեստով հանդես է գալիս, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, Բոստոնի ֆիլհար-

մոնիայի հանրաժանոր երգեհոնահար Պերն ժամկոչյանը: Նա մեծ հմտությամբ կատարում է հետևյալ ստեղծագործությունները.

ա) Վիվալդի՝ «Լյա մինոր կոնցերտ»-ի առաջին մասը.

բ) Բախ՝ երկու խորալային պրելյուդներ.

1. «Քնածներ, արթնացեք, ծագում է արշալույսը».

2. «Հիտու՝ մարդու ուրախության փափագը».

գ) Բախ՝ «Ին մինոր տոկատա և ֆուգա».

դ) Կոմիտաս վարդապետ՝ «Հայրապետական մաղթանք».

ե) «Խորհուրդ խորին».

զ) «Տեր, ողորմեա»:

ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ

Այնուհետև, տասը թույն ընդմիջումից հետո, հանդիսականները մեծ ուշադրությամբ դիտում են «Վեհափառ Հայրապետը Հոռմում և Վեհափառ» փաստագրական, գունավոր կինոժապավենը, որը նոր էր ստացվել Միլանից:

Հանդիսությունը վերջանում է երեկոյան ժամը 22-ին խանդավառ մթնոլորտում՝ մեծ գոհունակություն պատճառելով հանդիսականներին:

